են, ընջուած, բայց աւանդական ժողովրդի սովորոյթներն յարատեւ են եւ ասում են, թէ իշխանները երկրամշակի վարած եւ արդիւնաբերած հողի տէրը չեն, այլ նրանք շահերի ընկճուած ստրուկները, որոնց իրենց գործակալներն են դրել թագաւորները գաւառներում, իսկ հողը մշակողինն է եւ նա պետական հարկը — մի տասներորդը միայն պիտի վճարէ. իսկ պաշտօնեաների պիտի ապրուստ տայ նրանց հրամանակալը—Շահնուշահը տասանորդներից: Երանեան աշխարհում բոլոր յեղափոխութիւնները այս հողից հասոյթ վերցնելու համար են առաջացել, ամէն խռովութիւն, ապստամբութիւն վերջացել են այս տասանորդական հարկի վերահաստատումով: Ահա այս է եղել ինչպէս Իրանի ժողովրդի ապստամբութիւնների էական պատճառը, այս է եղել Հայաստանի երկրագործի մաքառումների պատճառը իր նախարարների դէմ. եւ Սավալանի մոգպետին դիմելու՝ քրիստոնէութեան դէմ մաքառելու միակ պատճառը: Իսկ պարթեւական տունը պարսիկ եւ հայ նախարարների այրուձիով, սնպուհներով եւ սպանելով այնքա՞ն ուժեղ էին, այնքա՞ն դաժան կապերով էին շղթայել ժողովուրդը, որ պարթեւական տան պայքարը երկրագործ հասարակութեան դէմ շուրջ հինգ դար տեւեց եւ մոգպետները, պարսիկ սասանեան իշխանների, երկրամշակների եւ հովիւների օժանդակութեամբ կործանեցին պարթեւական